ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/161

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9854-2021 գրությամբ «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 11.06.2021թ. թիվ 3/27/37256-21 գրության հիման վրա, 17.06.2021թ. թիվ 26/26-1/9854-2021 գրությամբ նախաձեռնել է «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/161 ընթացակարգի շրջանակներում 23.06.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.06.2021թ. թիվ 3/27/37256-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017 N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ ըստ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների, Ձեզ է ուղարկվում ՀՀ Ո ԳՀԾՁԲ- 2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Էյ Էյ Ջի հոլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը, արձանագրությունները և ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված պայմանագիրը, 01.03.2021թ. ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագիրը, վավերապայմանների փոփոխման վերաբերյալ համաձայնագիրը կնքված 11.05.2021թ. և պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը, տեղեկանք հիմնավորումները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/161 ընթացակարգի շրջանակներում 23.06.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 08.12.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պետության կարիքների համար գրասենյակների մաքրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրասենյակների մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ծառայությունները պետք է մատուցվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 21 օր հետո 1 օրվա ընթացքում, մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը:

3. Կողմերի միջև 01.03.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

4. Պատվիրատուն «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին ուղղված 09.06.2021թ. թիվ 27/652 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի միջև կնքված N ՀՀ Ո ԳՀԾՁԲ- 2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 ծածկագրով 08.12.2020թ. պայմանագրի և 01.03.2021-ին կնքված ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագրի շրջանակում վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ծառայությունները մատուցել սույն թվականի հունվարի 8-ից: Մայիս ամսվա ընթացքում ծառայությունները որոշ ՃՈ ստորաբաժանումներում կատարվել են թերի, ժամկետների խախտումներով և ոչ համապատասխան տեխնիկական բնութագրին:

01.06.2021 թվականի դրությամբ համաձայն ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված զեկուցագրերի թվով 7

ստորաբաժանումներում «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից մաքրման աշխատանքներ չեն իրականացվել:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուն կիրառում է պայմանագրի 2.1.3, 5 և 7.9 մասով սահմանված դրույթները:

Կից ներկայացվում են ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից մաքրման ծառայությունների անհամապատախանությունների վերաբերյալ ՃՈ ներկայացված զեկուցագրերի, տեղեկանքների պատճենները և բացասական եզրակացությունները:

Հարկ է նշել, որ պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, 2.1.3 ա) և բ) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, և 7-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով պայմանագրի 5-րդ ենթակետի 1,2,3 պարբերությունների պահանջները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված ՀՀ n ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 24.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Կոնվերսբանկ» ընկերություն՝ տուժանքի համաձայնագրի տեսքով որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 4 333 000 (չորս միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամի չափով ՀՀ ՖՆ գործառնական վարչության N 900008000698 հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 09.06.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9854-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 11.06.2021թ. թիվ 3/27/37256-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության և «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի միջև 08.12.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պետության կարիքների համար գրասենյակների մաքրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրասենյակների մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ծառայությունները պետք է մատուցվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 21 օր հետո 1 օրվա ընթացքում, մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը:

Կողմերի միջև 01.03.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

31.05.2021թ. ՀՀ ոստիկանության ՃՈ Աշտարակի հաշվառման-քննական բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Մ.Ասատրյանի կողմից կազմվել է տեղեկանք, հետևյալ բովանդակությամբ.

«Տրվում է առ այն, որ սույն թվականի մայիս ամսին ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Աշտարակի հաշվառման-քննական բաժանմունքում «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից նշանակված մաքրուհին ներկայացել է աշխատանքի, սակայն գրասենյակային մաքրման աշխատանքները կատարվել են ոչ պատշաճ՝ «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից անհրաժեշտ նյութերով ապահովված չլինելու պատճառով: Ելնելով վերոգրյալից տալիս եմ բացասական եզրակացություն»:

31.05.2021թ. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության գրանցման-հաշվառման և քննական հյուսիսային կենտրոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Սայադյանի կողմից կազմվել է տեղեկանք, հետևյալ բովանդակությամբ.

«Տրվում է առ այն, որ «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ն սույն թվականի մայիսի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության ՃՈ գրանցման-հաշվառման և քննական հյուսիսային կենտրոնում թերի է իրականացրել գրասենյակային մաքրման աշխատանքները, որի համար տալիս եմ բացասական եզրակացություն»:

01.06.2021թ. Արտաշատի ՀՔԲ-ի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Պողոսյանի կողմից կազմվել է տեղեկանք, հետևյալ բովանդակությամբ.

«Տրվում է առ այն, որ «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ն սույն թվականի մայիսի 01-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Արտաշատի հաշվառման քննական բաժանմունքում իրականացրել է գրասենյակային մաքրման աշխատանքներ, որի համար տալիս եմ բացասական եզրակացություն՝ աշխատանքը կատարվում է ոչ պատշաճ»:

01.06.2021թ. Վանաձորի ՀՔԲ-ի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ.Վարդանյանի կողմից կազմվել է տեղեկանք հետևյալ բովանդակությամբ.

«Տրվում է առ այն, որ «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ն սույն թվականի մայիս ամսվա ընթացքում ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման-քննական բաժանմունքում շուրջ երեք ամիս է մաքրություն կատարելու համար անհրաժեշտ միջոցներ և պարագաներ ընդհանրապես չի տրամադրվել, գրասենյակային մաքրման աշխատանքները իրականացվել է ոչ պատշաճ, որի համար տալիս եմ բացասական եզրակացություն»:

ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանին և ՀՔ և ՏՄՏՓ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Սարգսյանին 02.06.2021թ. ներկայացվել է զեկուցագիր հետևյալ բովանդակությամբ.

«Զեկուցում եմ Ձեզ, որ ս/թ հունիսի 1-ից «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի աշխատակիցը (մաքրուհին) հրաժարվում է ներկայանալ և իրականացնել մաքրության աշխատանքներ Սևանի ՀՔԲ-ում:

Զեկուցելով վերոգրյալը՝ խնդրում եմ Ձեր կարգադրությունը»:

Պատվիրատուն «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին ուղղված 09.06.2021թ. թիվ 27/652 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի միջև կնքված N ՀՀ Ո ԳՀԾՁԲ- 2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 ծածկագրով 08.12.2020թ. պայմանագրի և 01.03.2021-ին կնքված ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագրի շրջանակում վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ծառայությունները մատուցել սույն թվականի հունվարի 8-ից: Մայիս ամսվա ընթացքում ծառայությունները որոշ ՃՈ ստորաբաժանումներում կատարվել են թերի, ժամկետների խախտումներով և ոչ համապատասխան տեխնիկական բնութագրին:

01.06.2021 թվականի դրությամբ համաձայն ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված զեկուցագրերի թվով 7 ստորաբաժանումներում «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից մաքրման աշխատանքներ չեն իրականացվել:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուն կիրառում է պայմանագրի 2.1.3, 5 և 7.9 մասով սահմանված դրույթները:

Կից ներկայացվում են ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից մաքրման ծառայությունների անհամապատախանությունների վերաբերյալ ՃՈ ներկայացված զեկուցագրերի, տեղեկանքների պատճենները և բացասական եզրակացությունները:

Հարկ է նշել, որ պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, 2.1.3 ա) և բ) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, և 7-րդ չափաբաժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով պայմանագրի 5-րդ ենթակետի 1,2,3 պարբերությունների պահանջները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված ՀՀ ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 24.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Կոնվերսբանկ» ընկերություն՝ տուժանքի համաձայնագրի տեսքով որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 4 333 000 (չորս միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամի չափով ՀՀ ՖՆ գործառնական վարչության N 900008000698 հաշվեհամարին փոխանցելու նպատակով»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 09.06.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 5.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ ամբողջ վերոնշվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ ոստիկանության միջև 08.12.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված

խախտում, ուստի առկա են «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9854-2021 գրությամբ «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էյ Էյ ջի հոլդինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**